ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ

19 հոկտեմբերի 2022 թվականի N 02-Լ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը, 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 24-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը և 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ***որոշում է.***

1. Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանել «Հանրային ծառայության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պետական պաշտոնները և դրա հիման վրա հաստատել պետական պաշտոնների ցանկը (այսուհետ՝ ցանկ)՝ համաձայն հավելվածի:
2. Վերլուծել ցանկում ներառված պետական պաշտոն զբաղեցնող անձանց և նրանց ընտանիքի անդամների 2021 թվականի տարեկան հայտարարագրերը, ինչպես նաև 2022 թվականի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը:

3. Վերլուծել մինչև 2022 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ ցանկով սահմանված պետական պաշտոն զբաղեցնող և (կամ) զբաղեցրած անձանց և նրանց ընտանիքի անդամների հայտարարագրերը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ք. Երևան

Հավելված
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի
2022 թվականի հոկտեմբերի 19-ի N 02-Լ որոշման

ՑԱՆԿ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ

N	Պաշտոնի անվանում	Քանակ
1	Նախագահ	1
2	Ազգային ժողովի նախագահ	1
3	Ազգային ժողովի նախագահի տեղակալներ	3
4	Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահներ	12
5	Վարչապետ	1
6	Փոխվարչապետեր	2
7	Նախարարներ	12
	Վարչապետի ենթակա մարմինների ղեկավարներ	
8	ՀՀ Ոստիկանության պետ	1
9	Պետական վերահսկողական ծառայության ղեկավար	1
10	Ազգային անվտանգության ծառայության տնօրեն	1
	Կառավարության ենթակա մարմինների ղեկավարներ	
11	Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար	1
12	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար	1
13	Կադաստրի կոմիտեի ղեկավար	1
14	Կրթության տեսչական մարմնի ղեկավար	1
15	Միջուկային անվտանգության կոմիտեի նախագահ	1
16	Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար	1
17	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար	1
18	Պետական եկամուտների կոմիտեի նախագահ	1
19	Վիճակագրական կոմիտեի նախագահ	1
20	Քաղաքաշինության կոմիտեի նախագահ	1
21	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին ղեկավար	1
	Անկախ սահմանադրական մարմիններ	
22	Մարդու իրավունքների պաշտպան	1
23	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ և անդամներ	7
24	Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահ և անդամներ	7
25	Հաշվեքննիչ պալատի նախագահ և անդամներ	7
26	Կենտրոնական բանկի նախագահ և խորհրդի անդամներ	7
27	Գլխավոր դատախազ	1

	Քննչական մարմինների ղեկավարներ	
28	Քննչական կոմիտեի նախագահ	1
29	Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ	1
	Ինքնավար մարմինների ղեկավարներ/ղեկավար կազմ	
30	Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ և անդամներ	7
31	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ և անդամներ	5
32	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ և անդամներ	5
	Ընդհանուր քանակը՝	**95**

*Ծանոթագրություններ.

1. Տվյալ փուլում ռիսկային են համարվում ցանկում ներառված պաշտոնները, միաժամանակ հայտարարագրերի վերլուծության գործընթացը շարունակական է և հետագայում ընդգրկելու է նաև այլ պաշտոններ:
2. Ցանկում Բարձրագույն դատական խորհրդի անդամների, Սահմանադրական դատարանի դատավորների, այլ դատավորների պաշտոնները չներառելը պայմանավորված է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի մարտի 25-ի ՀՕ-199-Ն օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի հիման վրա վերջիններիս հայտարարագրերի վերլուծությունը նախկինում իրականացնելու հանգամանքով: